ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 42

«26» 09 2021 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամների անդամության ժամկետը լրանալու հանգամանքը, ինչպես նաև Ս.Հովհաննիսյանին, Ա.Անտոնյանին և Տ.Դավթյանին ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ նշանակելու մասին ՀՀ գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար 18.11.2020թ. N 129, 14.10.2020թ. N 121 և 23.05.2020թ. N 45 հրամանները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 23-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի հետևյալ կազմը՝ 3 տարի ժամկետով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գևորգ Բաղդասարյան- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Արտակ Հարությունյան- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ

Արմեն Մարուխյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-

	վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ
Սևակ Հովհաննիսյան -	Երևան քաղաքի դատախազ
Արթուր Անտոնյան -	Երևանի կայազորի զինվորական դատախազ
Սերգեյ Առաքելյան -	Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տաթևիկ Սուջյան-	ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (համաձայնությամբ)
Արա Գաբուզյան -	ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)
Տաթևիկ Դավթյան -	ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ):

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովում Սևակ Հովհաննիսյանի անդամության ժամկետը հաշվարկել՝ սկսած 2020 թվականի նոյեմբերի 18-ից, Արթուր Անտոնյանի անդամության ժամկետը՝ սկսած 2020 թվականի հոկտեմբերի 14-ից, իսկ Տաթևիկ Դավթյանի անդամության ժամկետը՝ սկսած 2020 թվականի մայիսի 23-ից:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի քարտուղար նշանակել Հայաստանի Հանրապետության դատախազության անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ Հերմինե Գևորգյանին:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության

բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ